# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N «ԳՀԱՊՁԲ-20-9/15-1»**

ք. Երևան 30.12.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունն ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ.Ղամբարյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԿՈՒՐԱՑԻՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Չերքեզյանի, ով գործում է «ԿՈՒՐԱՑԻՈ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 29 010 800 **/քսանինը միլիոն տասը հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ, ընդ որում «ԿՈՒՐԱՑԻՈ» ՍՊԸ-ն 29 և 30-րդ չափաբաժինների մասով վճարում է 152000 ՀՀ դրամ ԱԱՀ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի

կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և անկանխավ շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 27 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

8.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144129
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կուրացիո» ՍՊԸ
ք. Երևան, Սարյան 16/30
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 20512 2202158 1001
ՀՎՀՀ 02585487
Տնօրեն՝

Ա.ՋԵՐԲԵՋՅԱՆ

Հավելված N 1
30.12.2019 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-20-9/15-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը* |
| 1 | 33171100/541 | Տաքացնող վերմակ մարմնի վերին հատվածի համար REF:SWU2003 LEVEL 1 | Smiths Medical | Նախատեսված են մարմնի վերին հատվածի կոնվեկցիոն համակարգերով տաքացման համար: Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound նյութից,արտաքինից պատված չվառվող, կենսաբանորեն իներտ, անջրաթափանց նյութից,ունի պարանոցային կտրվածք: | հատ | 7200 | 216000 | 30.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 30.0 | |
| 2 | 33171100/542 | Տաքացնող վերմակ մարմնի ստորին հատվածի համարREF:SWU2004 LEVEL 1 | Smiths Medical | Նախատեսված են մարմնի ստորին հատվածի կոնվեկցիոն համակարգերով տաքացման համար: Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound նյութից,արտաքինից պատված չվառվող, կենսաբանորեն իներտ, անջրաթափանց նյութից: | հատ | 7200 | 216000 | 30.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 30.0 | |
| 3 | 33171100/543 | Տաքացնող վերմակ ամբողջ մարմնի համար REF:SWU2001 LEVEL 1 | Smiths Medical | Նախատեսված են ամբողջ մարմնի կոնվեկցիոն համակարգերով տաքացման համար: Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound նյութից, արտաքինից պապված չվառվող,կենսաբանորեն իներտ, անջրաթափանց նյութից,ունի պարանոցային կտրվածք: | հատ | 7200 | 72000 | 10.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 10.0 | |
| 4 | 33141110/560 | Վիրակապ-թաղանթ պոլիուրետանային REF:20463 Suprasorb F | Lohmann &Rauscher | Վիրակապ-թաղանթ պոլիուրետանային, ինքնակպչուն անջրաթափանց, հակամիկրոբային, "շնչող" 10x12սմ: Օգտագործվում է տարբեր վերքերի բուժման, վիրակապերի ֆիքսման համար: անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆֆեկտիվ ազդեցություն: | հատ | 470 | 376000 | 800.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 800.0 | |
| 5 | 33141110/561 | Վիրակապ-թաղանթ պոլիուրետանային REF:20461 Suprasorb F | Lohmann &Rauscher | Վիրակապ-թաղանթ պոլիուրետանային, ինքնակպչուն անջրաթափանց, հակամիկրոբային, "շնչող" 5x7սմ: Օգտագործվում է | հատ | 150 | 120000 | 800.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական | 800.0 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տարբեր վերքերի բուժման, վիրակապերի ֆիքսման համար: անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆֆեկտիվ ազդեցություն: | | | | | դեղաբագա | | |
| 6 | 33141117/506 | Վիրակապ պունկցիաներից և ներարկումներից հետո 2x4սմ REF:30625 Curaplast sensitive | Lohmann &Rauscher | Վիրակապ պունկցիաներից և ներարկումներից հետո 2x4սմ,կտրվող երիզով:**Լրակազմը** բաղկացած է կենտրոնական ներծծող բարձիկից, պոլիէսթերային,ներքին պոլիակրիլատային շերտից, հիպոալերգեն է, "շնչող", թրջվելուց չպոկվող: Փաթեթավորումը գործարանային՝ 250 հատ մեկ տուփում: | լրակազմ | 22 | 2750000 | 125,000.0 | ք.Արովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբագա | 125,000.0 | |
| 7 | 33141110/562 | Տրախեոստոմիկ փողի վիրակապ 8x9սմ REF:23094 Metalline | Lohmann &Rauscher | Վերքային մակերեսին չկպչող մետաղային հյուսերով վիրակապ է, բաղկացած երեք շերտից. առաջինը՝ մետաղական, երկրորդը ներծծող վիսկոզինից, երրորդը՝ պաշտպանիչ: Նախատեսված է 12-19մմ տրախեոստոմիկ փողերի կիրակապման համար, փաթեթավորումը՝ անհատական ստերիլ, չափսերը 8X9սմ: | հատ | 380 | 114000 | 300.0 | ք.Արովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբագա | 300.0 | |
| 8 | 33141110/563 | Հակամիկրոբային վիրակապ REF:20571 Suprasorb A+Ag | Lohmann &Rauscher | Հակամիկրոբային վիրակապ Կալցիում ալգինատի և արծաթի պարունակությամբ 10x10սմ,անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆֆեկտիվ ազդեցություն: | հատ | 4400 | 264000 | 60.0 | ք.Արովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբագա | 60.0 | |
| 9 | 33141110/565 | Վիրակապ-թաղանթ պոլիուրետանային REF:20464 Suprasorb F | Lohmann &Rauscher | Վիրակապ-թաղանթ պոլիուրետանային,ինքնակպչուն անջրաթափանց, հակամիկրոբային, "շնչող" 10x25սմ: Օգտագործվում է տարբեր վերքերի բուժման, վիրակապերի ֆիքսման համար: անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆֆեկտիվ ազդեցություն: | հատ | 1500 | 450000 | 300.0 | ք.Արովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբագա | 300.0 | |
| 10 | 33141110/566 | Վիրակապ կոմպրեսս REF:20701 Vliwaktiv Ag | Lohmann &Rauscher | Վիրակապ կոմպրեսս աբսորբենտ ակտիվացված ածուխի և արծաթի պարունակությամբ, 10x10սմ անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆֆեկտիվ ազդեցություն:, | հատ | 2640 | 316800 | 120.0 | ք.Արովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբագա | 120.0 | |
| 11 | 33141110/568 | Կաթետերի ֆիքսման սպեղանի 9x6 սմ, կենտրոնական թափանցիկ կպչող սպեղանիով REF:30200 | Lohmann &Rauscher | Կաթետերի ֆիքսման սպեղանի 9x6cm,խաչաձև կտրվածքով,կենտրոնական թափանցիկ կպչող սպեղանիով: Պատրաստված է պոլիէսթերից,ներքին | հատ | 250 | 375000 | 1,500.0 | ք.Արովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբագա | 1,500.0 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Curafix I. V. Control | | պոլիակրիլատային շերտով, հիպոալերգեն է, "շնչող", թրջվելուց չպոկվող: անհատական, ստերիլ փաթեթավորում: | | | | | | |
| 12 | 33141110/569 | Կաթետերի ֆիքսման սպեղանի 9x6 սմ, կենտրոնական ներծծող բարձիկով REF:30050 Curafix I.V. | Lohmann &Rauscher | Կաթետերի ֆիքսման սպեղանի 9x6sm,խաչաձև կտրվածքով,կենտրոնական ներծծող բարձիկով: Պատրաստված է պոլիէսթերից,ներքին պոլիակրիլատային շերտով, հիպոալերգեն է, "շնչող", թրջվելուց չպոկվող: անհատական, ստերիլ փաթեթավորում: | հատ | 145 | 217500 | 1,500.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 1,500.0 | |
| 13 | 33141136/529 | Արտածծման կաթետեր վակուում հսկիչով 12 Fr REF:100/375/120 PORTEX | Smiths medical | Պատրաստված է լատեքս չպարունակող, հարթ,սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջով; ունի արտածծման չափի հսկման "եռուղի"; տերմինալ անցքը հարթ, կորացված,ատրավմատիկ, ունի երկու կողմնային անցքեր,որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների վակուումային վնասման հավանականությունը, ունի կոնուսային փոխարկիչ 'տարբեր չափսերի երկարացման խողովակներին միացնելու հնարավորություն: Չափսը 12 Fr, | հատ | 750 | 225000 | 300.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 300.0 | |
| 14 | 33141136/530 | Արտածծման կաթետեր վակուում հսկիչով 14 Fr REF:100/375/140 PORTEX | Smiths medical | Պատրաստված է լատեքս չպարունակող, հարթ,սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջով; ունի արտածծման չափի հսկման "եռուղի"; տերմինալ անցքը հարթ, կորացված,ատրավմատիկ, ունի երկու կողմնային անցքեր,որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների վակուումային վնասման հավանականությունը, ունի կոնուսային փոխարկիչ 'տարբեր չափսերի երկարացման խողովակներին միացնելու հնարավորություն: Չափսը 14 Fr, | հատ | 750 | 450000 | 600.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 600.0 | |
| 15 | 33141136/531 | Արտածծման կաթետեր վակուում հսկիչով 16Fr REF:100/375/160 PORTEX | Smiths medical | Պատրաստված է լատեքս չպարունակող, հարթ,սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջով; ունի արտածծման չափի հսկման "եռուղի"; տերմինալ անցքը հարթ, կորացված,ատրավմատիկ, ունի | հատ | 750 | 525000 | 700.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 700.0 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | երկու կողմնային անցքեր,որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների վակումային վնասման հավանականությունը, ունի կոնուսային փոխարկիչ՝տարբեր չափսերի երկարացման խողովակներին միացնելու հնարավորություն: Չափսը 16 Fr, | | | | | | | |
| 16 | 33141136/538 | Էպիդուրալ կաթետեր 18G ասեղի համար REF:100/382/118 PORTEX | Smiths medical | Պոլիամիդային կաթետեր՝ նշագծված, կլոր ծայրով և 3 անցքով, Կոննեկտոր "Լուեր", կաթետերի ուղղորդիչ: երկ 915մմ, OD 0.83mm, ID .045mm: 18Gասեղի համար: | հատ | 2050 | 205000 | 100.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 100.0 | |
| 17 | 33171100/550 | Էպիդուրալ ասեղ 18G 80մմ REF:100/395/180 PORTEX | Smiths medical | Տուոխի մեպալոպլաստիկ ասեղ՝18 G 80mm, նշագծված,միացվող թևիկներով: | հատ | 2500 | 125000 | 50.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 50.0 | |
| 18 | 33141182/550 | Թորակալ դրենաժ-տրոակար 24CH, REF:21124 REDAX | REDAX | Մետաղական կաթետեր է, որը տեղադրված է թերմոպլաստիկ պոլիվինիլքլորիդե խողովակի մեջ, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ-ային սանդղակ, ներքին ծածկույթը հակաթրոմբոտիկ է, չխցանվող, հարթ: Երկարությունը 40սմ, չափսը 24CH. | հատ | 4500 | 405000 | 90.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 90.0 | |
| 19 | 33141182/551 | Թորակալ դրենաժ-տրոակար 28CH REF:21128 REDAX | REDAX | Մետաղական կաթետեր է, որը տեղադրված է թերմոպլաստիկ պոլիվինիլքլորիդե խողովակի մեջ, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ-ային սանդղակ, ներքին ծածկույթը հակաթրոմբոտիկ է, չխցանվող, հարթ: Երկարությունը 40սմ, չափսը 28CH. | հատ | 4500 | 585000 | 130.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 130.0 | |
| 20 | 33141182/552 | Թորակալ դրենաժ 24CH REF:21024 REDAX | REDAX | Պատրաստված է թերմոպլաստիկ պոլիվինիլքլորիդից, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ-ային սանդղակ,հարթ, կորացված ծայր, դիստալ և կողմնային անցքեր: Երկարությունը 45սմ, չափսը 24CH | հատ | 3000 | 120000 | 40.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 40.0 | |
| 21 | 33141182/553 | Թորակալ դրենաժ 28CH REF:21028 REDAX | REDAX | Պատրաստված է թերմոպլաստիկ պոլիվինիլքլորիդից, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ-ային սանդղակ,հարթ, կորացված ծայր, դիստալ և կողմնային անցքեր: Երկարությունը 45սմ,չափսը 28CH | հատ | 3000 | 450000 | 150.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 150.0 | |
| 22 | 33141182/554 | Թորակալ դրենաժ 32CH REF:21032 REDAX | REDAX | Պատրաստված է թերմոպլաստիկ պոլիվինիլքլորիդից, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ- | հատ | 3000 | 90000 | 30.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, | 30.0 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | յին սանդղակ,հարթ, կորացված ծայր, դիստալ և կողմնային անցքեր: Երկարությունը 45սմ, չափսը 32CH | | | | | Կենտրոնական դեղաբազա | | |
| 23 | 33141221/527 | Պլևրալ դրենաժային համակարգ երեք հատվածով REF:10105 REDAX | REDAX | Ունի երեք հատված,որից մեկը 2000ml, երկրորդը նախատեսված է ջրի համար(5-25սմ H2O), և պետք է ծառայի որպես միակողմանի փական, երրորդը՝ միացվում է վակուումի աղբյուրին և բացասական ճնշման հսկման համար է, ունի նմուշառման պորտ, MRI համատեղելի է: Ունի վակուումի ավտոմատ կարգավորիչ: | լրակազմ | 17000 | 850000 | 50.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 50.0 | |
| 24 | 33141221/528 | Պլևրալ դրենաժային համակարգ երեք հատվածով REF:10161 և աուտոտրանսֆուզիոն միավորով REF:10141 REDAX | REDAX | Ունի երեք հատված,որից մեկը 2.2լ, նախատեսված դրենավորվող հեղուկի կամ արյան համար; երկրորդը նախատեսված է ջրի համար (5-25սմ H2O), և պետք է ծառայի որպես միակողմանի փական, երրորդը՝ միացվում է վակուումի աղբյուրին և բացասական ճնշման հսկման համար է: Ունի նմուշառման պորտ, MRI համատեղելի է, ունի վակուումի ավտոմատ կարգավորիչ, ռեինֆուզիոն համակարգի միացուցիչ՝ գունային տարբերակմամբ, ռեինֆուզիայի պորտը նույնպես գունային տարբերակված է: Աուտոտրանսֆուզիոն միավորը ներդրված է կոշտ կաղապարի մեջ, ունի սանդղակ և դրենաժային համակարգին միանալու համար անհրաժեշտ խողովակները, ինչպես նաև ռեինֆուզիայի իրականացման համար անհրաժեշտ պորտերը: բոլոր խողովակները ունեն սեղմվող փականներ, գունային տարբերակմամբ: | լրակազմ | 51000 | 1020000 | 20.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 20.0 | |
| 25 | 33141221/529 | Պլևրալ դրենավորման/ ցենտեզի հավաքածու 12Fr Drentech UNICO | REDAX | Հավաքածուն պարունակում է 12 FR ատրավմատիկ պունկցիոն վերեշի ասեղով պոլիուրետանային կաթետեր, որը տեղադրվում է ասեղի վրա, ունի ներկառուցված Հեմլիխի փական, 3 ելքային անցքով, ռեզերվուար 2000 մլ ներկառուցված հեմլիխի փականով, նշտար, սեղմիչ, դրենաժի ադապտեր, 60 մլ ներարկիչ, երկարացման գիծ, ֆիքսող | լրակազմ | 39000 | 1560000 | 40.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 40.0 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | համակարգ: | | | | | | | |
| 26 | 33141221/530 | Թոքի դրենավորման ամբողջատոր հավաքածու REF:200/905/000 PORTEX | Smiths medical | Նախատեսված է հետվիրահատական շրջանում թոքի անվտանգ դրենավորման համար, ապահովում է հիվանդի շարժունակությունը: Ամրացվում, կամ կախվում է հիվանդի մարմնի կողային հատվածում: Պարունակում է՝ պարկ 1700մլ, միակողմանի փականներ, ներարկիչ, ամրացնող երիզ: | լրակազմ | 10000 | 300000 | 30.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 30.0 | |
| 27 | 33141221/531 | Լրակազմ՝ Պլևրալ դրենաժային համակարգ երկու հատվածով REF:10128, շարժական վակուումային սարքի համալրմամբ REF:10188 Drentech Mobile | REDAX | Լրակազմը նախատեսված է արտահիվանդանոցային պայմաններում թոքի ակտիվ դրենավորման համար: Կազմը՝ 1.Վակուումային ավտոնոմ սարք-DRENTECH Mobile REDLINE, վակուումը՝ թվային կարգավորմամբ,այդ թվում մինչև 10,15,20,25,30 սմ ջրի սյուն, մինչև 4 օր ավտոնոմ աշխատանք, լիցքավորման սարք: 2.սարքի և դրենաժային համակարգի միացման զոդիչ, 3.Պլևրալ դրենաժային համակարգ երկու հատվածով, Drentech SIMPLE 3 Mobile, որը ունի վակուումային սարքի ամրացման և միացման հնարավորություն: ծավալը 2200մլ, MRI համատեղելի, նմուշառման պորտ: | լրակազմ | 550000 | 1650000 | 3.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 3.0 | |
| 28 | 33141182/564 | Վերքերի դրենավորման զսպանակային տարա 500մլ REF:20200 REDAX | REDAX | 500մլ զսպանականման տարա,որի մեջ կա մետաղական զսպանակ վերքից անընդհատ ասպիրացնելու համար: ունի միացնող խողովակ սեղմակով և կոնաձև ծայրով, միակողմանի փական, վակուումի փական, ապահովում է մինչև 100սմ ջրի սյան վակուում: | հատ | 4000 | 200000 | 50.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 50.0 | |
| 29 | 33141211/555 | CO2 աբսորբեր շնչական սարքերի համար Sodasorb SODASORB | HENKEL. MOLECULAR | Պլաստիկե պարկ 5լ, գրանուլների չափսը 4/8M, չի պարունակում փոշենման, փոքր գրանուլներ: Գրանուլների պնդությունը՝ 91.6%, Բաղադրությունը Ca հիդրօքսիդ առնվազն 80%, Na հիդրօքսիդ 4%-ից ոչ ավել, էթիլային PH ինդիկատոր՝ 1%-ից ոչ ավել, H2O/խոնավություն/ 15.6-15.8%: Գունային փոփոխությունը դարձելի է ՝սպիտակ /մանուշակագույն /սպիտակ: | հատ | 12600 | 504000 | 40.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 40.0 | |
| 30 | 33141211/556 | CO2 աբսորբեր շնչական սարքերի համար | HENKEL. MOLECULAR | Պլաստիկե պարկ 5լ, գրանուլների չափսը 4/8M, չի պարունակում փոշենման, փոքր գրանուլներ: | հատ | 20400 | 408000 | 20.0 | ք.Աբովյան, Արզնու | 20.0 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Sodasorb Low-flow SODASORB LF | | Գրանուլների պնդությունը՝ 90.2%, Բաղադրությունը Ca հիդրօքսիդ առնվազն 80%, Na հիդրօքսիդ 4%-ից ոչ ավելի, էթիլային PH ինդիկատոր՝ 1%-ից ոչ ավել, H2O/խոնավություն/ 15.2 %-ից ոչ ավել: Գունային փոփոխությունը անդարձելի է 'սպիտակ /մանուշակագույն: նախատեսված է ցածր հոսքային /1լ և ցածր/ անեսթեզիաների համար: | | | | | խճուղի, Կենտրոնական դեղաբազա | |
| 31 | 33141182/565 | Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 6,5 REF:100/199/065 PORTEX | Smiths medical | Պատրաստված է թափանցիկ,թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, նախատեսված օռո և նազոտրախեալ ինտուբացիայի համար, մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, տանձաձև (կոնուսաձև) կառուցվածքի, Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ,Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Չափսը 6.5 | հատ | 950 | 38000 | 40.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 40.0 |
| 32 | 33141182/566 | Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 7,0 REF:100/199/070 PORTEX | Smiths medical | Պատրաստված է թափանցիկ,թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, նախատեսված օռո և նազոտրախեալ ինտուբացիայի համար, մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, տանձաձև (կոնուսաձև) կառուցվածքի, Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ,Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Չափսը 7.0 | հատ | 950 | 95000 | 100.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 100.0 |
| 33 | 33141182/567 | Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով N 7,5 REF:100/199/075 PORTEX | Smiths medical | Պատրաստված է թափանցիկ,թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, նախատեսված օռո և նազոտրախեալ ինտուբացիայի համար, մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, տանձաձև (կոնուսաձև) կառուցվածքի, Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ,Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Չափսը 7.5 | հատ | 950 | 380000 | 400.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա | 400.0 |
| 34 | 33141182/568 | Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով | Smiths medical | Պատրաստված է թափանցիկ,թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ | հատ | 950 | 380000 | 400.0 | ք.Աբովյան, Արզնու խճուղի, | 400.0 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | N8,0 REF:100/199/080 PORTEX | | պոլիվինիլքլորիդից, նախատեսված օրո և նազոտրախեալ ինտուբացիայի համար, մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, տանձաձև (կոնուսաձև) կառուցվածքի, Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ,Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Չափսը 8.0 | | | | | Կենտրոնական դեղաբազա | | |
